ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՍ... ԼՈՒԻՐԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔ

Փետրվարի 5-ին, Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ քահանայից ավանդական հավաքը, որի քննարկման նյութն էր՝ «թեմերում ծխական կյանքի եւ եկեղեցական կառույցների (ծխական խորհուրդ, տիկնանց միություն, երիտասարդաց միություն եւ այլն) կազմակերպումը եւ նրանց գործունեության կանոնակարգումը»: Քահանայից ժողովին մասնակցում էին Հայաստանի ու Արցախի թեմերի հոգեւոր առաջնորդները, Մայր Աթոռի միաբանները եւ թեմերի 169 հոգեւոր սպասավորներ:

Առավոտյան Մայր Տաճարում շուրջ երկու հարյուր քսան եկեղեցականներ, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մասնակցեցին Ս. Պատարագի արարողության: Պատարագիչն էր Շիրակի թեմի Ամասիայի փարածաշրջանի հոգեւոր հովիվ Տ. Փառեն քահանա Առաքելյանը:

Այնուհետեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում իր աշխատանքները սկսեց քահանայից ավանդական հավաքը: Ժողովը բացվեց Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի խոսքով: Տոնի առիթով նա շնորհավորեց հոգեւորականաց ողջ դասին՝ կոչ անելով վերանորոգել ուխտը հանդեպ Եկեղեցին եւ հավատարիմ մնալով Ղեւոնդյանց օրինակին՝ ապրել Քրիստոսի ու ազգի զինվոր լինելու գիտակցությամբ:

Հավաքի ընթացքում զեկույցներով հանդես եկան Տ. Փառեն քահանա Առաքելյանը (Շիրակի թեմ) եւ Տ. Վրթանես քահանա Բաղալյանը (Գուգարաց թեմ): Քահանայից ժողովի մասնակիցները քննարկեցին թեմական ծուխերի եւ նրանց ենթակառույցների կազմակերպությանն առնչված խնդիրներ, ինչպես նաեւ ազգային-եկեղեցական կյանքի զանազան մտահոգիչ երեւույթներ: Քննարկումների արդյունքում հավաքը հանդես եկավ հայտարարությամբ. «Մենք՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու սպասավորներս, գոհություն ենք հայտնում Երկնավորին, որ առիթ է ընձեռում մեզ Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնին համախմբվելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց Հայրապետի շուրջ՝ նորոգելու մեր ծառայական ուխտը եւ զորանալու մեր կոչման ու հովվական առաքելության մեջ: Ս. Ղեւոնդյանց քահանայից սխրանքն ամենքիս համար վկայություն է առ Աստված անբեկանելի հավատի, Հայրենիքի նկատմամբ սիրո ու հավատար-

մության, ժողովրդի հանդեպ անսահման նվիրումի ու պատասխանատվության:

Եկեղեցական առաքելության լիարժեք իրականացման գործում առանցքային նշանակություն ունի ծխական կյանքի պատշաճ կազմակերպումն ու կանոնակարգումը: Ծխական կառույցները՝ ծխական խորհուրդները, տիկնանց եւ երիտասարդաց միությունները, կիրակնօրյա դպրոցները, կոչված են բավարարելու հավատավոր մեր ժողովրդի հոգեւոր կարիքները, աշխուժացնելու համայնքային կյանքը եւ նպաստելու համընդհանուր հոգեւոր արթնությանը: Այս առիթով հորդորում ենք Հայ Եկեղեցու զավակներին իրենց գործուն մասնակցությամբ զորավիգ լինել Եկեղեցուն եւ հոգեւոր սպասավորներին՝ ծխական կյանքի արդյունավետ կազմակերպման համար:

Մենք մեր մտահոգությունն ենք հայտնում վերջին օրերին ազգային կյանքն ալեկոծած ցավալի իրողության՝ ՀՀ նախագահի թեկնածու Պարույր Հայրիկյանի դեմ կատարված մահափորձի առիթով: Դատապարտում ենք հանցավոր այս արարքը, որն ուղղված է ինչպես անհատի, այնպես եւ մեր ողջ հասարակության դեմ: Կոչ ենք անում մեր ժողովրդին ապրելու սիրո ու միաբանության ոգով, մեր ազգի եւ Հայրենիքի շահերի գիտակցությամբ լինելու առավել համախումբ եւ միակամ:

Աղոթում ենք առ Տերն մեր Փրկիչ, որ բարեխոսությամբ Ս. Ղեւոնդյանց քահանայից պահի ու պահպանի աշխարհասփյուռ մեր ժողովրդին, Հայրենիքն ու Եկեղեցին բարօրության, խաղաղության եւ պայծառության մեջ»:

Ժողովի ավարտին տեղի ունեցավ պարգեւաբաշխություն: Տոնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծաղկյա փիլոն եւ լանջախաչ կրելու իրավունք շնորհեց մի շարք քահանաների:

Շնորհաբաշխության ավարտին հոգեւորականներին հայրապետական իր պատգամն ու օրհնությունը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Գոհունակություն հայտնելով հավաքի առիթով՝ Նորին Սրբությունն անդրադարձավ Ս. Ղեւոնդյանց տոնի խորհրդին. «Ս. Ղեւոնդյանց քահանաները հոգեւոր առաջնորդության լավագույն օրինակն են տվել մեզ՝ լինել աստվածասեր եւ հայրենասեր, աստվածսիրության եւ հայրենասիրության այս երկու հասկացությունների հիման վրա կազմակերպել տերունապարգեւ մեր առաքելությունը, որ է հավատացյալի՝ ազգի զավակի հոգու փրկությունը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ եկեղեցական համայնքների կազմակերպման խնդրին՝ ընդգծելով դրանում հոգեւոր հովվի ծառայասեր ոգու ու նվիրումի կարեւորությունը: «Եկեղեցա-վարչական կյանքը նպաստելու է հոգեւոր առաքելության արդյունավոր իրականացմանը քրիստոնեական դաստիարակության ու կրթության առումով, հոգեւոր-բարոյական արժեքների վրա ազգային կյանքը կառուցելու, մեր ժողովրդի նկարագիրը Քրիստոսի Ավետարանի պատգամների ու պատվիրանների համաձայն կերտելու առումով եւ նաեւ կասեցնելու աղանդավորական որոմի տարածումը Հայաստան մեր աշխարհում», - ասաց Վեհափառ Հայրապետը: Վերջում Նորին Սրբությունն իր գնահատանքի խոսքը բերեց Հայ Եկեղեցու բոլոր հոգեւոր սպասավորներին եւ հովվական առաքելության իրագործման մեջ նրանց աջակից հայորդիներին: Վեհափառ

Ս. Գևորգեան Ս. Էջմիածնի Ս. Խորանում ցցուած սանդեղ

Ս. Վարդանանց ցնծում մեկին նամակներ ստանալիս ձեռքերում

Հայրապետը հորդորեց եկեղեցականներին նմանվել Ղեւոնդյանց քահանաներին եւ իրենց հանձնառու ծառայությամբ զորացնել Եկեղեցին ու նրա առաքելությունն ազգային կյանքում:

Ժողովի ամփոփումից հետո Մայր Տաճարում եկեղեցականները մասնակցեցին Երեկոյան ժամերգության:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 7-ին, Սրբոց Վարդանանց զորավարաց տոնին, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հանդիսություն: Վարդանանց հերոսամարտին նվիրված ցերեկույթը կազմակերպել էին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի ուսանողները: Միջոցառմանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գեւորգյան ճեմարանի դասախոսներ եւ Հայաստանի բուհերի ուսանողներ:

Հանդիսությունը բացվեց Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի խոսքով: Նա մասնավորապես ընդգծեց տոնի պատմական կարեւորությունն ինչպես ներկայի, նույնպես եւ ապագայի սերունդների հայեցի դաստիարակության եւ ոգու կերտման համար: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաեւ ԵՊՀ պրոռեկտոր տեխնիկական գիտությունների թեկնածու Ռուբեն Մարկոսյանը՝ ԵՊՀ դասախոսական կազմի եւ ուսանողության անունից շնորհավորելով Վեհափառ Հայրապետին անվանակոչության օրվա առիթով:

Միջոցառման մասնակիցներին Վարդանանց սխրագործության մասին բանախոսություն ներկայացրեց ճեմարանի դասախոս պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ավետիս Հարությունյանը: Հանդիսության ընթացքում հոգեւոր ու հայրենասիրական երգերով հանդես եկան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի երգչախմբերը, ներկայացվեցին նաեւ Ավարայրի հերոսներին նվիրված բանաստեղծություններ:

Գեղեցիկ ավանդույթ դարձած այս միջոցառման ավարտին ներկաներին իր պատգամն ու օրհնությունը բերեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը տոնը հայորդիների ուխտի նորոգության օր նկատեց՝ ներշնչվելու եւ ապրելու Վարդանանց սխրանքով, նրանց օրինակով առաջնորդվելու եւ իրականացնելու իրենց առաքելությունը: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Վարդանանց արյունով սրբագործվեց հայրենի հողը, կերտվեց հայ ժողովրդի հարատեւության խորհուրդը՝ ապրելու եւ գործելու հանուն Հայրենիքի եւ հավատքի: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց

երիտասարդներին կյանքում ընթանալ Վարդանանց ոգով, որն իր մեջ կրում է հայրենասիրության ու աստվածսիրության խորհուրդը, եւ տոնի խորհուրդը նկատելով որպես իրենց ուղղված Վարդանանց պատգամ՝ այն կենսագործել ամենօրյա կյանքում:

Խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց համալսարանի ղեկավարությանն ու Ճեմարանի տեսչությանը ոգեշնչող միջոցառման կազմակերպման համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄՐԳԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Փետրվարի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Արմավիրի թեմի Մրգաշատ գյուղի համայնքի անդամներին՝ ուղեկցությամբ համայնքի հոգեւոր հովիվ Տ.Գորյուն արեղա Առաքելյանի:

Հանդիպման սկզբում Հայր Գորյունը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց համայնքում կատարվող աշխատանքները եւ արձանագրված արդյունքները, մասնավոր անդրադարձ կատարեց նորաստեղծ ծխական խորհրդի եւ երիտասարդական միության գործունեությանը, տիկնանց միության կազմակերպման ուղղությամբ ձեռնարկված քայլերին:

Այնուհետեւ Մրգաշատի համայնքի անդամներին ողջունեց եւ հայրապետական իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ, համախմբված հոգեւոր հովվի շուրջ, նրանք լավագույնս կկազմակերպեն իրենց հոգեւոր կյանքը՝ նպաստելով նաեւ համայնքում եղած խնդիրների հաղթահարմանը:

Վեհափառ Հայրապետը հորդորեց Մրգաշատի համայնքի ներկայացուցիչներին հավատարիմ մնալ Հայ Եկեղեցուն եւ նրա սրբազան ժառանգությանը, այն սուրբ հավատքին, որ 1700 տարիներ շարունակ պահպանվել եւ փոխանցվել է ապագա սերունդներին իբրեւ հայ ինքնության գրավական: Նորին Սրբությունը պատգամեց երիտասարդներին ամուր մնալ հավատքի եւ հայրենասիրության մեջ, իրենց ջանքերով նպաստել երկրի շինությանն ու պայծառությանը եւ Եկեղեցու զորացմանը:

Ամենայն Հայոց Հայրապետը նաեւ իր գնահատանքը հայտնեց Հայր Գորյունին կատարված աշխատանքների համար՝ հորդորելով շարունակել ծառայասիրության նույն ոգով օգտակարություն բերել համայնքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մրգաշատ համայնքի հավատացյալները Ս. Էջմիածնում

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեզերի բանավոր պաշտպանություն:

Մասնավոր վարդապետության ատիճանի համար թեզեր պաշտպանեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Տ. Սահակ աբեղա Շաքարյանը՝ «Նոր Նախիջևանի եւ Բեսարաբիայի հայոց թեմը» եւ Տ. Արիստակես աբեղա Այվազյանը՝ «Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու երկերը հայ մատենագրության մեջ» թեմաներով:

Հանձնաժողովը նախագահում էր Մայր Աթոռի Վանական խորհրդի նախագահ եւ Հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը: Հանձնաժողովի կազմում ընդգրկված էին նաեւ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը եւ Մայր Աթոռի հոգևոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Տ. Գևորգ եպիսկոպոս Սարոյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ առաջիկայում Տ. Սահակ աբեղա Շաքարյանը եւ Տ. Արիստակես աբեղա Այվազյանը Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տվչության հատուկ արարողությամբ կստանան մասնավոր վարդապետության ատիճաններ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ՀՀ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Փետրվարի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին՝ ՀՀ նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ:

«Ընտրություններում Ձեր հաղթանակը վկայում է, որ մեր ժողովուրդը տեսնում է Հայաստանի առաջընթացի ու զարգացման հեռանկարը, վստահում է վերափոխումների Ձեր ծրագրերին եւ գնահատում այդ ուղղությամբ Ձեր ներդրած ջանքերն ու նվիրումը, Հայրենիքին ծառայության Ձեր անցած ուղին ու վաստակը», - ասվում է շնորհավորագրում:

Նորին Սրբությունը մաղթել է, որ Սերժ Սարգսյանի նախագահության երկրորդ շրջանը Հայրենիքի համար լինի զարգացման բեկումնային ժամանակահատված, երբ մեր ժողովրդի կյանքը կընթանա անշեղ վերելքի ու բարգավաճման ուղիով եւ կհաղթահարվեն հիմնախնդիրներն ու դժվարությունները:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամների ուղեկցությամբ, այցելեց եւ Հայրապետական իր օրհնությունը բերեց ՀՀ նախագահին:

Հանդիպման ընթացքում Հայոց Հայրապետը մաղթեց, որ Երկնավոր Տերը զորացնի ՀՀ նախագահին ու հայրենի իշխանություններին եւ նոր ձեռքբերումներ պարգեւի երկրի շենացման, ազգային խղձերի իրագործման ճանապարհին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 19-21-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով ընդլայնված կազմով: Ժողովի սկզբում Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ԳՀԽ անդամներին՝ իրենց օգտակար ծառայության համար:

ԳՀԽ նիստերը նախագահեցին Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանը եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքական փոխանորդ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը: Ժողովում քննության առնվեցին նվիրապետական աթոռներին եւ թեմական կյանքին, Եկեղեցու հոգեւոր-կրթական, քարոզչական առաքելությանը, կանոնադրական ու ծիսական հարցերին վերաբերող մի շարք խնդիրներ:

Երուսաղեմի պատրիարքության ընթացիկ գործունեության վերաբերյալ զեկույց ներկայացրեց Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանը՝ մասնավորաբար անդրադառնալով Երուսաղեմի հայոց պատրիարքի ընտրությանը եւ տեղեկացնելով, որ նորընտիր պատրիարք Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանի ընտրության վավերացման դիմումներն արդեն իսկ ուղարկվել են Իսրայելի, Պաղեստինի եւ Հորդանանի իշխանություններին եւ մոտ ժամանակներս սպասվում է նրանց վավերացումը: ԳՀԽ անդամները գոհունակությամբ ընդունեցին զեկույցը՝ վերստին շնորհավորելով նորընտիր պատրիարքին եւ մաղթելով, որ Տերը զորացնի նրան՝ իր ջանքերով առավել պայծառացնելու պատմական Ս. Աթոռը: Կ.Պոլսի հայոց պատրիարքության վերաբերյալ զեկույցով հանդես եկավ Կ. Պոլսի հայոց պատրիարքական փոխանորդ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը: Փոխանորդ Սրբազանը նշեց, որ Կ.Պոլսի Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի առողջական վիճակը շարունակում է մնալ ծանր, եւ նա գտնվում է բժիշկների մշտական խնամքի ներքո: Արամ Սրբազանը նաեւ մասնավոր անդրադարձ ունեցավ թուրքիայում հայոց սրբավայրերի պահպանության եւ վերադարձման խնդիրներին: Ի գիտություն ընդունելով զեկույցը՝ ԳՀԽ անդամները Տիրոջ զորակցությունը հայցեցին Ամենապատիվ Պատրիարքին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2012 թ. գործունեության մասին զեկույց ներկայացրեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը՝ անդրադառնալով անցնող տարում Մայր Աթոռի կողմից ներեկեղեցական եւ միջեկեղեցական ասպարեզներում իրագործված ծրագրերին, Սուրբ Էջմիածնի քարոզչական, կրթադաստիարակչական եւ ընկերային առաքելությանը: Տեղեկացվեց, որ 2012 թ. հրապարակվել հայրա-

ԳՀԽ-ի ժողով Մայր Աթոռում

ԳՀԽ-ի անդամները

պետական 57 կոնդակներ, ձեռնադրվել են 9 քահանաներ՝ 2 կուսակրոն եւ 7 ամուսնացյալ, ինչպես նաեւ 35 սարկավագներ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականության թիվը 668 է, որոնցից՝ 56-ը եպիսկոպոս, 33-ը՝ վարդապետ եւ ծայրագույն վարդապետ, 61-ը՝ աբեղա, 423-ը քահանա, 95-ը՝ սարկավագ, ովքեր ծառայում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր կառույցներում: Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատություններում ուսանողների թիվը 220 է:

Մայր Աթոռի հովանու ներքո գործող յոթ Հայորդյաց տներ հաճախել են 5000 երեխաներ: Սոցիալական ոլորտում նոր կարեւոր ձեռնարկ էր Արաբկիրում «Նազգաշյան մանուկների տուն» կենտրոնի բացումը, որտեղ 10 տարեկանից բարձր 20 աղջիկներ ստանում են մասնագիտական կողմնորոշում եւ սոցիալական աջակցություն: Անցնող տարում Մայր Աթոռի 51 բաժինների կենսագործունեությունը ապահովել են 1174 անձինք՝ 142 եկեղեցականներ եւ 1032 աշխարհականներ:

Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները գոհունակությամբ ընդունեցին զեկույցը՝ մաղթելով անսասանություն եւ պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Գերագույն հոգեւոր խորհուրդը քննարկեց նաեւ եպիսկոպոսաց ժողովի կազմակերպման հետ առնչված հարցեր: Վերահաստատվեց ժողովն առաջիկա սեպտեմբերին Մայր Աթոռում գումարելու որոշումը եւ քննության առնվեցին ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ, Կանոնական հանձնախմբի համապատասխանող Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի, Տավուշի թեմի առաջնորդ, Սրբադասման հանձնախմբի համապատասխանող Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պեդրոսյանի եւ Մայր Աթոռի դիվանապետ եւ Ծիսական հանձնախմբի համապատասխանող Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի զեկույցները՝ առնչված եպիսկոպոսաց ժողովի օրակարգային նյութերին:

Ժողովի երկրորդ նիստին քննարկվեցին Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված Հայ Եկեղեցու կողմից իրականացվելիք միջոցառումների առաջարկները: Առաջարկների հանձնախմբի աշխատանքը ներկայացրեց Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: Այս առնչությամբ ծրագրված միջոցառումները եւ այդ շրջանակներում Մայր Աթոռի հետ հնարավոր համագործակցությունը ներկայացրեց նաեւ նիստին հրավիրված ՀՀ Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը: Գերագույն հոգեւոր խորհուրդը հանձնարարեց ԱՄՆ Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի գլխավորած հանձնաժողովին լրամշակել առաջարկները, կազմել միջոցառումների ծրագիրն ու ժամանակացույցը եւ ձեռնամուխ լինել աշխատանքների իրականացմանը:

Ժողովի ընթացքում լսվեց նաեւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի զեկույցը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի, Վազգենյան հոգեւոր դպրանոցի եւ Հառիճավանքի ընծայարանի վերաբերյալ: Գեւորգ Սրբազանը, անդրադառնալով Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների գործունեությանը, մասնավորապես խոսեց հոգեւորականության պատրաստության ծրագրերի, ինչպես նաեւ Հայաստանի բուհերի ու արտերկրի համալսարանների եւ հոգեւոր հաստատությունների հետ համագործակցության մասին:

Հանրակրթական ոլորտում Մայր Աթոռի գործունեության հիմնական ուղղություններին անդրադարձավ Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը՝ ընդգծելով կենտրոնի արդյունավետ գործակցությունը ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության եւ թեմերի հետ մի շարք կրթական ծրագրերի շրջանակներում եւ հատկապես «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչների վերապատրաստության գործում: Ի թիվս տարբեր ծրագրերի Հայր Սուրբը տեղեկացրեց, որ այս տարի ծրագրված է դպրոցներում անցկացնել «Հայ հոգեւոր եւ ազգային երգի փառատոն» հանրապետական մրցույթ: ԳՀԽ անդամները գոհունակությամբ ընդունեցին կատարված աշխատանքների մասին զեկույցները՝ կարեւորելով ինչպես հոգեւորականության պատրաստությունը, նույնպես եւ հոգեւոր-քրիստոնեական արժեքների ջամբումը երիտասարդ սերնդին:

Ժողովի երրորդ նիստին Գերագույն հոգեւոր խորհուրդն անդրադարձ կատարեց Եկեղեցու կողմից սիրիահայությանը ցուցաբերվող զորակցությանը: Տեղեկացվեց, որ այդ նպատակով Մայր Աթոռը 200 հազար ԱՄՆ դոլար գումար արդեն փոխանցել է, իսկ վերջերս տրամադրել է եւս 100 հազար ԱՄՆ դոլար: Գերագույն հոգեւոր խորհուրդը հորդորեց թեմական առաջնորդներին շարունակել առավել ջանքեր ներդնել՝ համայնքներից օգնություն եւ օժանդակություն հասցնելու կարիքի մեջ գտնվող Սիրիայի հայ համայնքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՈՒՄ ՄԱՍԹՐԻԽԹԻ ՄԷՋ

26 Յունուար 2013-ին Հոլանդայի հարաւային ծայրամասի Մասթրիխթ քաղաքին մէջ հանդիսաւորապէս կատարուեցաւ Ս. Կարապետ եկեղեցւոյ սուրբ սեղանի, վէմ քարի եւ յուշապահտակի օծման արարողութիւնը, ձեռամբ Ֆրանսայի թեմի Առաջնորդ եւ Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Բարձրաշնորհ Տ. Նորվան Ս. Արք. Զաքարեանի:

Ներկայ էին Ռուսմոնդի կաթոլիկ եկեղեցւոյ առաջնորդ Ֆրանց Վիրթզ Եպիսկոպոս, Ռուսական եկեղեցւոյ առաջնորդ Վլադիկօ Գաբրիէլ Եպիսկոպոսը, Մասթրիխթի Ս. Սրվանտիուս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հաննեման վարդապետը, Մասթրիխթի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Ա. Կուոիս վարդապետը, Ռումանիոյ Հայոց թեմի Առաջնորդ Տ. Տաթեւ Եպս. Յակոբեան, Բեւելիքսի Հայրապետական Պատուիրակի փոխանորդ Տ. Զատիկ Վրդ. Աւետիքեան, Ամսթերդամի հոգեւոր հովիւ Տ. Տարօն Քհնյ. թադեւոսեան, Ալմելոյի հոգեւոր հովիւ Տ. Մաշտոց Քհնյ. Բաղդասարեան եւ Տ. Արմէն Քհնյ. Մելքոնեան: Ներկայ էր նաեւ Հայաստանի դեսպան Տիկին Զիւնիկ Աղաջանեանը:

Օծման պահուն խորան բարձրացան Տաթեւ Եպս. Յակոբեան եւ Զատիկ Վրդ. Աւետիքեան: Տ. Մաշտոց եւ Տ. Տարօն քահանայ հայրերու կողմէ ըստ կանոնի ջուրով եւ գինիով լուացումէ ետք պատարագիչ սրբազանը՝ Նորվան Արք. Զաքարեան օծեց սուրբ սեղանը, ապա վէմ քարը օծելու հրաւիրեց Տաթեւ Սրբազանը: Յուզիչ էր այն պահը, երբ

ատեանին մէջ Նորվան Սրբազան յուշատախտակը օծեց եւ եկեղեցին վերանուանեց Հայ Առաքելական Ս. Կարապետ եկեղեցի:

Ռումոնդի Կաթոլիկ եկեղեցւոյ առաջնորդ Ֆրանս Վիրթզ Եպիսկոպոս իր ճառին մէջ նշեց, որ այս օրերուն, երբ Հոլանտայի մէջ շատ մը եկեղեցիներ կը փակուին, իրենք մեծ ուրախութեամբ այս եկեղեցին կը փոխանցեն հայերուն, որովհետեւ հայ համայնքի շնորհիւ եկեղեցւոյ դռները բաց պիտի մնան, քրիստոնէական հաւատքը վառ պիտի մնայ եւ եկեղեցին պիտի շարունակէ իր սրբազան առաքելութիւնը:

Նորվան Սրբազան քարոզի ընթացքին իր հոգեկան անհուն ուրախութիւնը յայտնեց, որ Հոլանտայի հայութիւնը եւ մասնաւորաբար Մասսթրիխթի հայկական համայնքը ունեցաւ այս գեղեցիկ եկեղեցին: Շեշտեց՝ որ եկեղեցին առանց ժողովուրդի կը դադրի եկեղեցի ըլլալէ: Մանաւանդ այս պայմաններուն մէջ, երբ հայ ժողովուրդը ցրուած է, եկեղեցւոյ կոչումն է այդ ցրուեալ հաւաքականութիւնը դարձնել ժողովուրդ: Եկեղեցին առաւել քան երբեք ընելիք ունի: Յեղասպանութեան ընթացքին քանդուած եկեղեցւոյ տեղ այսօր նոր եկեղեցի մը յարութիւն առաւ: Սրբազանը խրատեց ուշադրութեամբ հետեւիլ Հայ Եկեղեցւոյ վարդապետութեան եւ ամէն ձեւով դէմ դնել աղանդաւորներու եւ մանաւանդ Եհովայի վկաներուն, որոնք շատցած եւ աշխուժացած են շրջանին մէջ:

Պատարագէն ետք հոգեւորականաց դասը եւ ուխտաւոր ժողովուրդը մասնակցեցան Մասսթրիխթի Ծիսական Խորհուրդի կողմէ պատրաստուած մատաղօրհնութեան եւ սիրոյ ճաշին:

Հոլանտայի մէջ այսօր կ»ապրին շուրջ 25.000 հայեր, որոնց մօտ 2500-ը խմբուած է Մասսթրիխթի եւ շրջակայքի շրջաններուն մէջ:

Ըստ աւանդութեան, Մասսթրիխթ քաղաքի աւետարանիչը եղած է Հայաստանէն եկած Սրվանտիուս անունով սուրբը, որուն նուիրուած գիտաժողով մը կազմակերպուեցաւ 2011 թուականին Մասսթրիխթի մէջ:

Տ. Տաթեւ Վրդ. Յակոբեանի (այժմ եպիսկոպոս, առաջնորդ Ռումանիոյ թեմի) հոգեւոր հովուութեան ժամանակ Հոլանտայի մէջ հիմնուեցան 6 ծուխեր, որոնց շարքին Մասսթրիխթի ծուխը, ուր 1990-ական թուականներէն արդէն կը գործէր «Անի» միութիւնը: Հայր Տաթեւի եւ, «Անի» միութեան նախագահ Լեւոն Սարգիսի ջանքերով Մասսթրիխթի մէջ ստեղծուեցաւ Ծիսական խորհուրդը: Այդ օրուընէ սկսեալ ամիսը մէկ անգամ օտար եկեղեցիներու մէջ կը մատուցուէր հայկական պատարագ:

2012-ին, Ծիսական խորհուրդի ատենապետ Լեւոն Սարգիսի եւ Հոգեւոր Հովիւ Տ. Մաշտոց Քհնյ. Բաղդասարեանի ջանքերով եւ Կաթոլիկ Եկեղեցւոյ հետ ունեցած սերտ յարաբերութիւններու շնորհիւ կարելի եղաւ Մասսթրիխթի կեդրոնը գտնուող Ս. Յարութիւն անունը կրող կաթոլիկ եկեղեցին ձեռք բերել հայ համայնքի հոգեւոր պէտքերուն համար:

Այս եկեղեցիին հայկական նկարագիր տալու համար հարկ եղաւ որոշ փոփոխութիւններ կատարել՝ խորանի եւ մկրտութեան աւազանի տեղափոխութիւն, վարագոյրի գետեղում եւ այլն: Այս եկեղեցւոյ ձեռքբերումով հոլանտահայութիւնը ունեցաւ երրորդ եկեղեցին Հոլանտայի մէջ:

ՄԱՍՍԹՐԻԽԹ-
ՀՈԼԱՆՏԱ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների նոր նշանակումներ:

Կոտայքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանն առաջնորդական իր ծառայությանը համատեղ ստանձնել է ՀՀ Ոստիկանության հոգեւոր պատասխանատուի պաշտոնը:

Տ. Նարեկ աբեղա Ավագյանը եւ Տ. Հմայակ աբեղա Սահակյանը ծառայության են կոչվել Մայր Աթոռում: Տ. Արիս աբեղա Տոնոյանը նշանակվել է Խոր Վիրապի վանահայր:

Տ. Կիրակոս աբեղա Դավթյանը ծառայության է կոչվել Բելառուսի հայոց համայնքում՝ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի իշխանության ներքո, իսկ Տ. Սամվել աբեղա Մխիթարյանը՝ Տավուշի թեմում:

Տ. Պարթեւ աբեղա Բարսեղյանը, վերադառնալով Ֆրանսիայի հայոց թեմում հոգեւոր ծառայությունից, նշանակվել է Մայր Աթոռի փոխդիվանապետ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

ԼԱՆՋԱԽԱԹ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Պարթեւ քհն.	Մուրադյանը	(Արարատյան Հայրապետական թեմ)
Երվանդ քհն.	Բաբայանը	(Արարատյան Հայրապետական թեմ)
Հանրարձում քհն.	Դանիելյանը	(Ազգային բանակ)
Սիմեոն քհն.	Մովսիսյանը	(Ազգային բանակ)
Զաքարիա քհն.	Անանյանը	(Ազգային բանակ)
Մասիս քհն.	Վարդերեսյանը	(Արմավիրի թեմ)
Ստեփանոս քհն.	Հովհաննիսյանը	(Սյունյաց թեմ)
Լեւոն քհն.	Հովհաննիսյանը	(Արթիկի թեմ)
Եղիշե քհն.	Նազարյանը	(Արթիկի թեմ)
Սեւակ քհն.	Գաբրիելյանը	(Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի)
Զոհրապ քհն.	Մանասյանը	(Կոտայքի թեմ)
Հուսիկ քհն.	Գրիգորյանը	(Շիրակի թեմ)
Փառեն քհն.	Առաքելյանը	(Շիրակի թեմ)
Մերուժան քհն.	Սողոյանը	(Գուգարաց թեմ)

ԾԱՂԿՅԱ ՓԻԼՈՆ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Հակոբ քհն.	Խաչատրյանը	(Արարատյան Հայրապետական թեմ)
Դավիթ քհն.	Կյուրեղյանը	(Արարատյան Հայրապետական թեմ)
Կարապետ քհն.	Կարապետյանը	(Արարատյան Հայրապետական թեմ)
Գաբրիել քհն.	Պետրոսյանը	(Արարատյան Հայրապետական թեմ)
Պարթեւ քհն.	Աշուրյանը	(Արմավիրի թեմ)
Եղիշե քհն.	Կարսյանը	(Արմավիրի թեմ)
Հովնան քհն.	Մաթեւոսյանը	(Կոտայքի թեմ)
Իսահակ քհն.	Մարգարյանը	(Կոտայքի թեմ)
Վարուժան քհն.	Տերտերյանը	(Շիրակի թեմ)
Սահակ քհն.	Մարտիրոսյանը	(Վայոց Ձորի թեմ)

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԻ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ

Սուրբ Հակոբ եկեղեցին (ԱՄՆ Արեւմտյան թեմ)

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ՈՍԿԱՆ ՔԱՀԱՆԱ ԲԱՂՈՒՄՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Ոսկան քահանա Բաղումյանը (Տավուշի թեմ)՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին իր դիմումի հիման վրա:

Կարգալույծ հռչակվածը կդասվի աշխարհականների շարքը՝ Վիգեն Բաղումյան ավագանի անունով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Վերջին աւելի քան հարիւր տարիներին հայ մամուլում լայնօրէն կիրառուեց ունեցաւ հրապարակումն իբրեւ մեծ պահանջարկ ունեցող լրագրական տեսակ. ինչ-որ պատճառով անտիպ մնացած երկեր, այլեւայլ բնոյթի շարադրանքներ, նամակներ, փաստաթղթեր տպագրութեան յանձնելով, հրապարակելով լրացնում են անցեալի բացը՝ մեկնաբանելով ինչ-ինչ հանգամանքներ, ծանօթագրելով դրանց մէջ յիշատակուած անուններն ու դէպքերը: Մեր ամսագիրը ի թիւս բազում այլ հրապարակումների, երիցս տպագրել է պատմաբան Նիկոլ Կարապետեանի թղթօնները՝ հետեւելով ժանրի աւանդոյթին (տե՛ս 2011, Թ., 2012 Դ. եւ Ժ.): Չգիտես ինչու, այս անգամ որոշ ընթերցողներ սոյն հրապարակումները համարում են գրագողութիւն, որ անարդար է: Այստեղ եւս, սովորականի նման գնահատական խօսք է ասուած խիզախ պատմաբանի աշխատանքին, եւ նիւթերը տպագրուած են նրա՛ անունով: Ընդհանրապէս հրապարակողը (Ա. Ասատրեան) մեծագոյն հարգանքով է արտայայտուել Ն. Կարապետեանի հացէին եւ բարձր է գնահատել նրա գործը: